

# Տպագրատուն

Ծրագիրը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները՝ Շուշիում հիմնել ժամանակակից տեխնիկայով հագեցած տպագրատուն, ստեղծել 8 մշտական աշխատատեղ, զարգացնել քաղաքի սպասարկման ոլորտը, վերականգնել քաղաքի ավանդական տպագրության կենտրոնի կարգավիճակը:

Ծրագրի իրականացումը սկսվել է բարձրորակ տպագրության ապահովման համար անհրաժեշտ՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող ժամանակակից տեխնիկայի ձեռքբերմամբ:

Ծրագրով նախատեսված բոլոր ներդրումները՝ ԼՂՀ իշխանությունների կողմից Հիմնադրամին հատկացված տարածքի վերանորոգում, արտաքին և ներքին ձևավորում, կահավորում, տեխնիկայի և նյութերի ձեռքբերում, իրականացվում են Հիմնադրամի կողմից:

